



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

« 29 »

ՈՅ

2021թ

№ ՈՑ/11/-179

## Մարտի 22-28-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանները ՀՀ-ում

Մարտի 22-ին, 24-25-ին շրջանների զգալի մասում, 23-ին, 26-ին և 28-ին՝ առանձին շրջաններում, 27-ին՝ հանրապետության ողջ տարածքում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ապարան լճայինում՝ 60մմ, Հրազդանում՝ 56մմ, Ապարանում՝ 49մմ, Ջերմուկում՝ 48,3մմ, Պուշկինի լճք.-ում՝ 47,3մմ, Արագած բարձրլեռնայինում՝ 44մմ, Ստեփանավանում՝ 43,8մմ, Գորիսում և Ֆանտանում՝ 42,4մմ, Վանաձորում՝ 40,9մմ, Սեմյոնովկայում՝ 40,4մմ, Տաշիրում՝ 39մմ, Արենիում՝ 38մմ, Իջևանում՝ 36մմ, Օձունում՝ 34,5մմ, Ծաղկահովիտում՝ 33մմ, Աշոցքում՝ 31,8մմ, Բագրատաշենում, Դիլիջանում և Սևանում՝ 31մմ, Աշտարակում՝ 30,1մմ, Ճամբարակում՝ 29,5մմ, Մարտունիում՝ 29,3մմ, Գավառում՝ 28,4մմ, Ամասիայում և Թալինում՝ 27մմ, մնացած շրջաններում՝ 5,6-26մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 22-ին նորմայից բարձր է եղել 3-6 աստիճանով (Տավուշում և Լոռիում՝ նորմայի սահմաններում՝ դրական և բացասական շեղումով), 23-24-ին՝ նորմայից բարձր 4-8, 25-ին՝ 2-5, 26-ին՝ նորմայի սահմաններում՝ դրական և բացասական շեղումով (Սյունիքում՝ նորմայից բարձր 1-3), 27-28-ին՝ նորմայից ցածր 2-5 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մարտի 24-ին: Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում գրանցվել է +17...+21°C (Մեղրիում՝ +24°C), Տավուշում, Լոռիում, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +12...+17°C (Արենիում՝ +21°C), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +6...+11 (Գյումրիում, Մասրիկում՝ +14°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մարտի 28-ին: Շիրակում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում, Սյունիքի նախալեռներում գրանցվել է -6...-11°C (Տաշիրում՝ -16°C, Ստեփանավանում՝ -14°C, Մասրիկում՝ -13°C), Կոտայքի, Վայոց ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ -2...-6°C, Տավուշում, Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտում՝ -3...+2 (Դիլիջանում՝ -7°C, Մեղրիում՝ +3°C) աստիճան:

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի 7-14մ/վրկ, պողթևումները՝ մինչև 15-23մ/վրկ (Մարտունիում, Տաշիրում, Ստեփանավանում, Պուշկինի լճք.-ում, Ծաղկահովիտում, Արթիկում, Եղվարդում, Թալինում, Աշտարակում և Արմավիրում քամու ուժգնացում՝ 12-20մ/վրկ, պողթևումները՝ մինչև 18-30մ/վրկ) արագությամբ:

Մարտի 27-ին Աշոցքում, Ամասիայում և Արթիկում դիտվել է գետնաբուք 5-16մ/վրկ, պողոթկումները՝ մինչև 16-18մ/վրկ արագությամբ:

Մարտի 29-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնայինում 198սմ, Որոտանի լճ.-ում՝ 109սմ, Ջերմուկում՝ 87սմ, Ամբերդում՝ 86սմ, Սեմյոնովկայում՝ 61սմ, Պուշկինի լճ.-ում՝ 52սմ, Հրազդանում՝ 44սմ, Ապարան լճայինում՝ 41սմ, Անանունի լճ.-ում՝ 33սմ, Աշոցքում՝ 15սմ, Սևանում՝ 17սմ, Ապարանում՝ 13սմ, Ծաղկահովիտում՝ 14սմ, Ստեփանավանում՝ 12սմ, մնացած շրջաններում՝ 2-10սմ: Արարատյան դաշտում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում եղանակային պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն եղել դաշտային աշխատանքներ իրականացնելու համար դիտվել են տեղումներ:

Լեռնային և որոշ նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել ձմեռային հանգստի շրջանում, այն ծածկված է ձյան շերտով, որի բարձրությունը կազմել է 2-17սմ:

Եղվարդում կատարվել է խաղողի դաշտի այգեբաց և պտղատուների էտ: Աշտարակում պտղատուների բողբոջները բացվել են, Մերձավանում սովորական ժամկետներից 10-12 օր շուտ սկսվել է խաղողի վազի հյութաշարժը:

Արարատյան դաշտում կանխատեսված ժամկետներում ծիրանենին ծաղկեց: Գրանցված բացասական ջերմաստիճանները (-1..-4C0) նպաստավոր չէին ծաղկած պտղատուների համար:

Մարտի 22-ին հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ, մարտի 23-25-ին՝ գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, առանձին գետերում՝ զգալի: Մարտի 26-28-ին գետերում դիտվել է ջրի ելքերի նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել՝ 1900.62մ (28.03.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 17 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ. Ազիզյան